

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ
Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ, Հ. ՄԻՐԶՈՑԱՆԻՆ,
Ս. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, Ա. ՋԱՎԱԽՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր **04.06.2019թ. հ.01/253** գրության՝ տեղեկացվում է.

1-ին կետ՝

-առաջարկվել է Երևան քաղաքում գործող ամբուլատոր պոլիկլինիկական բուժհաստատություններում ծավալել ցերեկային ստացիոնար բաժանմունքներ՝ շուրջօրյա հսկողություն չպահանջող հիվանդների բուժումը կազմակերպելու նպատակով:

-իրականացվել է Երևանի ենթակայության ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում «Մայրության դպրոցների» կատարելագործում՝ տեսակավառակների և նյութերի տրամադրմամբ, ինչպես նաև «Մոր և մանկան» անկյուններ ստեղծելով:

2-րդ կետ՝ ընկերությունների ուսումնասիրությունների արդյունքների քննարկումից հետո առաջարկվել է.

-կարգապահական տույժերի ենթարկել բացթողումներ և թերացումներ թույլ տված պատասխանատուներին՝ բժիշկների աշխատանքը համապատասխանեցնելով ՀՀ գործող չափորոշիչներին,

-բուժհիմնարկները վերանորոգել և վերազինել ժամանակակից սարքավորումներով:

3-րդ կետ՝ 2018թ.-ից մինչ օրս Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող առողջապահական ընկերությունների բժիշկներին և բուժքույրերին տրամադրվել են վերապատրաստման ուղեգրեր, ինչպես նաև կազմակերպվել են գիտաժողովներ և սեմինարներ՝ բժշկական որակի բարձրացման նպատակով:

Առողջապահական ոլորտի գերակայությունն առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, մատչելիության ապահովումը, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը: Երևանի ենթակայության առողջապահական ընկերություններում իրականացվել է վերը նշված գերակայության ապահովմանն ուղղված մի շարք գործողություններ, մասնավորապես.

Երևան քաղաքի ազգաբնակչությանը որակյալ բուժօժանդությունների մատուցման և մատչելիության բարձրացման տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բուժհաստատությունների հագեցվածությունը, ուստի՝ Երևանի ենթակայության առողջապահական հաստատությունների վերազինման շարունակականության ապահովման նպատակով **2018-2019թթ.** Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ, «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում, ձեռք է բերվել **350** անուն նոր բուժսարքավորումներ, ընդամենը՝ **163.3** մլն դրամ, այդ թվում՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների, ֆիզիոթերապևտիկ սարքավորումներ, բժշկական պարագաներ (վիրահատական սեղաններ, լամպ, գինեկոլոգիական աթոռներ և այլն) և այլ անհրաժեշտ սարքավորումներ և պարագաներ: Ծրագիրը կրում է շարունակական բնույթ: Հաշվետու տարվա

համար բժշկական սարքավորումների պահանջարկը ձևավորվում է առողջապահական ընկերությունների կողմից տրված առաջարկների, ընկերությունների տնօրենների, համապատասխան նեղ մասնագետների (բժիշկների) հետ քննարկումների, շրջայցերի մոնիտորինգների արդյունքում: Յուրաքանչյուր տարվա առողջապահության ոլորտի բյուջեն որոշելիս առաջնահերթությունը տրվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների հագեցմանը լաբորատոր-գործիքային ախտորոշիչ սարքավորումներով, քանի որ արդյունավետ և որակյալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու անհրաժեշտ պայմաններից գլխավորը (առաջնակարգը) ճիշտ ախտորոշումն է:

Առողջապահության ոլորտի գերակա խնդիրներից է համարվում նաև առողջապահական ընկերություններում ջեռուցման համակարգերի անցկացումը և շենքային պայմանների բարելավումը: **2013-2019թթ.** Երևան քաղաքի բյուջեից նշված գերակայության ապահովման համար «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում կատարվել է առողջապահական ընկերությունների ջեռուցման համակարգերի անցկացման, պատուհանների փոխարինման, տանիքների նորոգման, ընթացիկ վերանորոգում, ինչպես նաև հիմնանորոգման աշխատանքներ: **2016թ.** Երևանի ենթակայության բոլոր ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններն ամբողջությամբ ապահովվել են ջեռուցման համակարգերով, **2017** թվականի դրությամբ՝ ամբողջությամբ փոխարինվել են պատուհանները: Ամբողջությամբ հիմնանորոգվել և վերաբացվել է «Քանաքեռ-Զեյթուն» ծննդատուն ՓԲԸ-ն: **2018** թվականին կատարվել և **2019** թվականին կատարվում են առողջապահական ընկերությունների տանիքների նորոգման աշխատանքներ:

4-րդ կետ՝ տնօրենների նշանակումը կատարվում է Երևանի քաղաքապետի **27.02.2019թ. հ.518-Ա** որոշման հիման վրա՝ առողջապահության վարչության պետի կողմից: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ առողջապահական ընկերությունների տնօրենների և վարչության աշխատակիցների խրախուսում չի եղել:

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար կարգապահական տույժեր են տրվել.

- **07.08.2018թ.**՝ թիվ **1** պոլիկլինիկայի տնօրեն Ռուզաննա Հայրապետյանին և թիվ **4** պոլիկլինիկայի տնօրեն Վարդան Հովհաննիսյանին՝ նկատողություն:
- **14.12.2018թ.**՝ թիվ **4** պոլիկլինիկայի տնօրեն Վարդան Հովհաննիսյանին՝ նկատողություն,
- **27.12.2018թ.**՝ թիվ **12** պոլիկլինիկայի տնօրեն Արմեն Վարդումյանին՝ խիստ նկատողություն,
- **06.03.2019թ.**՝ «Նորագավիթ» պոլիկլինիկայի տնօրեն Ռուզաննա Ադամյանին՝ նկատողություն,
- **05.06.2019թ.**՝ «Կարմիր Բլուր» պոլիկլինիկայի տնօրեն Հասմիկ Ջանիբեկյանին՝ նկատողություն,
- **18.02.2019թ.**՝ թիվ **12** պոլիկլինիկայի տնօրեն Արմեն Վարդումյանն ազատվել է աշխատանքից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ